Նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, հայցվորը վճարել է պետական տուրքի գումարը, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Դատարանը, նկատի ունենալով, որ սույն գործի շրջանակներում, ներկայացված հայցադիմումի համար պետական տուրքից բացի, այլ դատական ծախսերի հետ կապված պահանջներ չեն ներկայացվել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.12-րդ, 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. Հայցվոր Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» փակ բաժնետիրական ընկերության հայցն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի 14.02.2024 թվականի «Լոռիի ՃՇՇ» ՓԲԸ-ի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 260-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Սամվել Բաբայան**